

Համախառն ներքին արդյունք

Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ, ներառյալ «չհաշվառվող տնտեսության» ծավալները) ամսական հաշվարկը կատարվել է, ելնելով տնտեսության ճյուղերի նախորդ տարվա տվյալներից և համապատասխան ճյուղերում ընթացիկ ժամանակահատվածում ստեղծված արտադրանքի ֆիզիկական ծավալների աճի տեմպերից, գների ինդեքսներից: ՀՆԱ-ի հաշվարկում հաշվի են առնված ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (հետայսու՝ ՀՀ ԱՎԾ) ճյուղային վիճակագրությունների ամփոփ, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության և ՀՀ կենտրոնական բանկի կողմից ստացված տվյալները:

ՀՆԱ-ն շուկայական գներով տնտեսության ճյուղերում ստեղծված ավելացված արժեքի (ՀՆԱ հիմնական գներով) և ապրանքների (արտադրանքի) գուտ (հանած սուբսիդիաները) հարկերի գումարն է:

ՀՆԱ-ի ինդեքս-դեֆլյատորն ընթացիկ գներով հաշվարկված ՀՆԱ-ի հարաբերությունն է նախորդ տարվա համադրելի գներով հաշվարկված ՀՆԱ-ի ծավալի նկատմամբ:

Արդյունաբերություն

Արդյունաբերական արտադրանքի ծավալը արժեքային արտահայտությամբ որոշվում է որպես արդյունաբերական կազմակերպությունների (ներառյալ առանձնացված ստորաբաժանումները) կողմից թողարկված արտադրանքի, կատարված արդյունաբերական բնույթի աշխատանքների և մատուցված ծառայությունների ծավալների հանրագումար: Արտադրանքի ծավալի մասին տվյալները բերված են ընթացիկ գներով, առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի: Ընդ որում, պատվիրատուի հումքից և նյութերից (որոնց համար արտադրող կազմակերպությունը չի վճարում) թողարկված արտադրանքը, ընթացիկ գներով, արդյունաբերական արտադրանքի ծավալ ներառվում է առանց այդ հումքի և նյութերի արժեքի, իսկ համադրելի գներով՝ ներառյալ դրանց արժեքը:

Կազմակերպության կողմից թողարկված արտադրանքի ծավալը որոշվում է առանց ներքին շրջանառության արժեքի: Կազմակերպության ներքին շրջանառություն է համարվում արտադրված պատրաստի իրերի և կիսաֆաբրիկատների այն մասի արժեքը, որն օգտագործվում է տվյալ կազմակերպության կողմից սեփական արդյունաբերա-արտադրական կարիքների համար:

Արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը բնութագրում է արդյունաբերական արտադրանքի ծավալի դինամիկայի փոփոխությունն արժեքային արտահայտությամբ: Հաշվարկվում է արտադրանքի ծավալները համադրելիության բերելու միջոցով: Արտադրանքի գնահատականը, համադրելի գներով, իրականացվում է անմիջականորեն կազմակերպություններում արդյունաբերողների գների հիման վրա: Որպես կշիռ ընդունվում են ընթացիկ տարվա գները:

Իրացված արտադրանքի ծավալը հաշվետու ժամանակաշրջանում իրացված սեփական արտադրանքի, ինչպես նաև պատվիրատուի կողմից ընդունված, կատարված աշխատանքների և ծառայությունների արժեքն է՝ անկախ այն բանից, թե դրանց վճարները կազմակերպության հաշվարկային հաշվին մուտքագրվել են, թե ոչ:

Արդյունաբերական արտադրանքի արտադրությունը բնեղեն արտահայտությամբ որպես կանոն բերվում է ըստ արտադրանքի համախառն թողարկման, այսինքն՝ ներառյալ կազմակերպության ներսում արդյունաբերա-արտադրական կարիքների համար ծախսված և պատվիրատուի հումքից թողարկված արտադրանքը:

Սպառողական ապրանքների թողարկումն արժեքային արտահայտությամբ արտացոլում է պարենային ապրանքների, ալկոհոլային խմիչքների և ոչ պարենային ապրանքների

արտադրությունն արտադրողի բացթողման գներով, առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի: Սպառողական ապրանքներին են դասվում արտադրանքի այն տեսակները, որոնց մեծ մասն օգտագործվում է բնակչության կողմից վերջնական սպառման համար: Արտադրանքի այն տեսակները, որոնք կարող են օգտագործվել ինչպես արտադրական, այնպես էլ ոչ արտադրական սպառման համար, սպառողական ապրանքներին են դասվում այն մասով, որն օգտագործվում է ոչ արտադրական սպառման համար: Սպառողական ապրանքների արտադրության ծավալների ինդեքսները հաշվարկվում են համադրելի գներով:

Գյուղատնտեսություն

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը բուսաբուծության և անասնապահության արտադրանքի գումարն է արժեքային արտահայտությամբ՝ տվյալ տարվա փաստացի գներով: Ցուցանիշը հաշվարկվում է գյուղական համայնքներից և գյուղատնտեսությամբ զբաղվող իրավաբանական անձանցից ստացված վիճակագրական հաշվետվությունների, ինչպես նաև ընտրանքային դիտարկման (7600 գյուղացիական տնտեսություններ) տվյալներով:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքի կազմում չեն ընդգրկվում անտառաբուծությունից, ձկնորսությունից և որսորդությունից ստացված արժեքը:

Բուսաբուծության համախառն արտադրանքը ներառում է հաշվետու տարում.

- ստացված հացահատիկի և հատիկաընդեղենների, տեխնիկական մշակաբույսերի (յուղատու մշակաբույսերի սերմեր, վուշ, կանեփ, շաքարի ճակնդեղ, ծխախոտ, մախորկա և այլն), կարտոֆիլի, բանջարա-բոստանային մշակաբույսերի, պտղի և հատապտղի, խաղողի, կերային մշակաբույսերի արտադրանքի, գյուղատնտեսական մշակաբույսերի սերմերի և բազմամյա տնկարկների տնկանյութի և այլնի արժեքը,

- բազմամյա տնկարկների հիմնման և մշակման արժեքը,
- բուսաբուծության արտադրանքի անավարտ արտադրության փոփոխության արժեքը (աշնանացանի, ցրտահերկի բարձրացման և այլ աշխատանքների ծախսերը, որոնք կատարվում են հաշվետու տարում՝ հաջորդ տարվա բերքի տակ):

Անասնաբուծության համախառն արտադրանքը ներառում է հաշվետու տարում.

- անասունների աճեցումից ստացված մթերք (միս, կաթ, բուրդ, ձու և այլն) արժեքը,
- անասունի, թռչունի և այլ անասնատեսակների աճեցումից ստացված արժեքը (ծնի, հավելաճի և քաշաճի արժեքը), առանց իրացված մսի արժեքի,
- մեղվաբուծության արտադրանքի արժեքը և այլն:

Ձկնորսություն և ձկնաբուծություն

Ոլորտի վերաբերյալ տեղեկատվությունը հավաքագրվում է բաց ծովում, առափնյա կամ ներքին քաղցրահամ ջրերի ձկների, խեցեմորթերի (խեցգետին, ծովախեցգետին, օմար, մանր ծովախեցգետին (կրեվետկա), լանգուստ) և կակղամորթերի, կրիաների, իժերի, ծովային ոգնիների, բնական մարգարտի, սպունգերի, ջրիմուռների և նմանատիպ այլ ծովամթերքի որս իրականացնող, ինչպես նաև ձկնաբուծարաններից և ձկների կլիմայավարժեցմամբ ու ձկնամեկիորատիվ աշխատանքներով, նորածին մանրաձկների, մանր ծովախեցգետինների, ջրիմուռների և ուրիշ ուտելի ծովաբույսերի արտադրությամբ զբաղվող իրավաբանական անձանցից և անհատ ձեռնարկատերերից:

Շինարարություն

Հիմնական միջոցները կազմում են Հայաստանի ազգային հարստության կարևորագույն մասը: Հիմնական միջոցներ են հանդիսանում շենքերը, կառույցները, մեքենաներն ու սարքավորումները (բանվորական և ուժային մեքենաներն ու սարքավորումները, չափիչ և կարգավորիչ փորձասարքերն ու հարմարանքները, լաբորատոր սարքավորումները, հաշվողական տեխնիկան), փոխադրամիջոցները և հիմնական միջոցների այլ տեսակներ:

Հիմնական միջոցների մեջ են ներառվում նաև պետական և մասնավոր հատվածների կազմակերպությունների բոլոր հիմնական միջոցների, ինչպես նաև ֆիզիկական անձանց սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցները: Այդ միջոցների մեջ ներառվում են բնակելի շենքերը, բնակչության անձնական օժանդակ տնտեսությունների, ինչպես նաև գյուղացիական տնտեսությունների (տնտեսական շենքեր, բազմամյա տնկիներ, բանող և մթերատու անասուններ, գյուղտեխնիկա) հիմնական միջոցները:

Հիմնական միջոցների գործարկման ցուցանիշի մեջ ներառվում է շինարարությունն ավարտված և շահագործման հանձնված կազմակերպությունների, արտադրական և ոչ արտադրական նշանակության շինությունների ու կառույցների արժեքները, նոր շահագործվող մեքենաների, բոլոր տիպի տրանսպորտային միջոցների (մոնտաժվող և չմոնտաժվող, շինարարության նախահաշվի մեջ մտած և չմտած) արժեքները, գործիքների, գույքի և այլ առարկաների արժեքները, որոնք հաշվառված են հիմնական միջոցների մեջ, բազմամյա տնկիների (մրգատու, խաղողի այգիներ և այլն) արժեքը, հողերի ոռոգման և չորացման աշխատանքների արժեքը, հողերի որակի լավացման հետ կապված կապիտալ ծախսերը և հիմնական միջոցների արժեքի մեծացման հետ կապված այլ ծախսեր:

Շինարարության ծավալում ընդգրկվում են նոր շինարարության, գործող արդյունաբերական, գյուղատնտեսական, տրանսպորտային, առևտրային կազմակերպությունների վերակառուցման, ընդլայնման և տեխնիկական վերազինման, շենքերի ամրացման, վերանորոգման, եկեղեցաշինության, բնակարանային, սոցիալ-մշակութային նշանակության օբյեկտների շինարարության աշխատանքների արժեքները, բոլոր տեսակի սարքավորումների տեղադրման, գործիքների, գույքի ձեռքբերման համար կատարված կապիտալ ծախսերը և այլ շինարարական աշխատանքները:

Շինարարության ծավալն արտահայտվում է համապատասխան տարվա ընթացիկ ծախսերի գներով:

Բնակելի շենքերի ընդհանուր (օգտակար) մակերեսը կազմված է բնակելի շենքերի և մշտական տիպի հանրակացարանների, ծերանոցների, մանկատների և գիշերօթիկ դպրոցների ննջարանային տարածությունների բնակելի մակերեսից և օժանդակ տարածություններից:

Օժանդակ տարածությունների թվին են պատկանում բնակարանի ներսում գտնվող խոհանոցը, միջանցքները, սանհանգույցները, լողասենյակները, հանդերձարանները, պահեստները, պահարանները: Հանրակացարաններում բացի վերը նշվածներից օժանդակ տարածությունների թվին են պատկանում նաև մշակութա-կենցաղային նշանակության և բժշկական ծառայության տարածությունները: Օժանդակ տարածությունների մեջ են մտնում փակ պատշգամբները, լոջաները, երկարավուն պատշգամբները, եթե դրանք նախատեսված են նախագծերի տեխնիկատնտեսական ցուցանիշներով:

Բնակելի շենքերի ընդհանուր (օգտակար) մակերեսի մեջ չեն մտնում նախասրահների, նախամուտքերի, աստիճանավանդակների, ընդհանուր միջանցքների մակերեսները, ինչպես նաև բնակելի շենքերին կից կառուցված ոչ բնակելի շենքերի մակերեսները:

Տրանսպորտ

Տրանսպորտը բովանդակում է ընդհանուր և ոչ ընդհանուր օգտագործման տրանսպորտի տեսակները:

Ընդհանուր օգտագործման տրանսպորտն իրականացնում է տնտեսության ճյուղերի և բնակչության բեռների, ինչպես նաև ընդհանուր օգտագործման երթուղիներով ուղևորների փոխադրումները:

Ոչ ընդհանուր օգտագործման տրանսպորտն իրականացնում է տվյալ կազմակերպության բեռների փոխադրումները (ավտոմոբիլային տրանսպորտի համար՝ ավտոտրանսպորտային միջոցներով, երկաթուղային տրանսպորտի համար՝ ոչ ընդհանուր օգտագործման մերձատար ուղիներով), ինչպես նաև ավտոտրանսպորտով տվյալ կազմակերպության աշխատողների փոխադրումները (ներտնտեսական և ծառայողական):

Ընդհանուր օգտագործման տրանսպորտի հիմնական ցուցանիշներն են *բեռների փոխադրումների ծավալը (տոննա)*, *բեռնաշրջանառությունը (տոննա-կիլոմետր)*, *ուղևորների փոխադրումների ծավալը (ուղևոր)* և *ուղևորաշրջանառությունը (ուղևոր-կիլոմետր)*:

Փոխադրված բեռների (բեռնափոխադրումներ) ծավալում հաշվի է առնվում փոխադրված բեռների փաստացի քանակը, հաշվի առնելով տարայի կամ կոնտեյների քաշը:

Բեռնաշրջանառությունը (տոննա-կիլոմետրերով) հաշվարկվում է փոխադրվող բեռների յուրաքանչյուր խմբի քաշի (տոննա) և այդ բեռնափոխադրման հեռավորության արտադրյալների հանրագումարով:

Ուղևորափոխադրումների ծավալում ներառվում է տրանսպորտային միջոցներով փաստացի փոխադրված ուղևորների թվաքանակը (ներառյալ անվճար երթևեկության իրավունքներից օգտվող ուղևորները):

Ուղևորաշրջանառությունը (ուղևոր-կիլոմետր) հաշվարկվում է փոխադրված ուղևորների թվաքանակի և մեկ ուղևորի փոխադրման միջին հեռավորության արտադրյալների հանրագումարով:

Ավտոմոբիլային տրանսպորտին ուղևորափոխադրման (փոխադրված ուղևորների թվաքանակը) և ուղևորաշրջանառության ծավալները որոշվում են ըստ հաղորդակցության առանձին տեսակների՝ ներքաղաքային, ներմարզային, միջմարզային և միջպետական:

Կապ

Կապի ցանցը հաղորդագրության (տեղեկատվության) ընդունում, հանձնում և բաշխում (կոմուտացիա, տեսակավորում) իրականացնող կապի կազմակերպությունների, կետերի, ինչպես նաև հաղորդումն ապահովող կապի գծերի կամ կապուղիների ամբողջությունն է: Կախված կապի տեսակից, տարբերում են *փոստային կապի ցանց*՝ փոստային առաքումներ և պարբերական հրատարակությունների փոխանցում ու ընդունում, և *էլեկտրակապի ցանց*՝ մեկ կամ մի քանի տեսակի փոխանցումներ (հեռախոսային, հեռագրային և ֆաքսիմիլային փոխանցումներ, փոխանցումներ կոմուտացիոն համակարգերից, էլեկտրոնային փոստ, հեռուստատեսային, ձայնային և այլ տեսակի ռադիո ու լարային հեռարձակման փոխանցումներ և այլն) ապահովող տեխնիկական համակարգեր:

Կապի ծառայությունները փոստային առաքումների կամ էլեկտրակապի հաղորդակցության ընդունման, մշակման, հաղորդման և տեղ հասցման գործունեության արդյունքն է:

Ընդհանուր օգտագործման կապի ցանցը բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձանց օգտագործման համար բաց փոխկապակցված կապի ցանցի հիմնական մասն է:

Փոստային կապը փոստային առաքումների ընդունում, մշակում, փոխադրում և տեղ հասցնումն է, ինչպես նաև պարբերական հրատարակումների առաքում, հասցնում և տարածումը:

Հեռագրային կապը հեռագրերի, լուսահեռագրերի հաղորդում ու տեղ հասցնումն է, խոսակցությունների ապահովումն է բաժանորդագրային հեռագրատան միջոցով, տվյալների և թերթային էջերի հաղորդումը:

Հեռախոսային կապը ներհանրապետական (միջքաղաքային), միջազգային և տեղական (քաղաքային և գյուղական) հեռախոսային խոսակցությունների իրականացման ապահովումը, հեռախոսային կապուղիներով տվյալների հաղորդման կազմակերպում է:

Բջջային կապը ռադիոհեռախոսային կապի շարժական համակարգ է:

Սպառողական շուկա

Մանրածախ առևտրի շրջանառությունը բնակչությանը կանխիկ դրամով վաճառված սպառողական ապրանքների արժեքն է՝ անձնական սպառման կամ տնային տնտեսությունում օգտագործման համար: Բնակչության առանձին խավերին զեղչով վաճառված ապրանքների արժեքը ներառվում է մանրածախ ապրանքաշրջանառության մեջ ամբողջ ծավալով: Մանրածախ ապրանքաշրջանառության ծավալի ցուցանիշը ձևավորվում է խանութների, կրպակների, հանրային սննդի կազմակերպությունների, սպառողական ապրանքների շուկաների, գյուղատնտեսական արտադրանքի շուկաների միջոցով իրականացված ապրանքաշրջանառության հիման վրա:

Բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալն արտացոլում է բնակչության կողմից տարբեր տեսակի ծառայությունների սպառման ծավալը և վիճակագրորեն չափվում է մատուցված ծառայությունների դիմաց վճարված դրամական միջոցների գումարով: Ընդ որում, վճարը կարող է կատարվել թե անմիջապես սպառողների կողմից՝ իրենց սպառած ծառայությունների դիմաց, այնպես էլ այն կազմակերպության միջոցով, որտեղ աշխատում է տվյալ սպառողը (սպառված ծառայությունների ծախսերի լրիվ կամ մասնակի փոխհատուցման կամ վճարման գումարի չափով): Բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալի ցուցանիշը ձևավորվում է կենցաղային, մարդատար տրանսպորտի, փոստային և հեռահաղորդակցության, բնակարանային-կոմունալ տնտեսության, մշակույթի, զբոսաշրջության և էքսկուրսային, ֆիզկուլտուրայի և սպորտի, բժշկական բնույթի, առողջարանների և հանգստյան տների, իրավական բնույթի և բանկերի, կրթության համակարգի և այլ ծառայություններից: Բոլոր տեսակի ծառայությունների հաշվառումն իրականացվում է դրանց մատուցման պահին բնակչությունից ստացված փաստացի վճարի չափով (անկախ վճարման ձևից):

Գներ

Սպառողական գների ինդեքսը սղաճի կարևորագույն ցուցանիշներից է (ՀՀ-ում հանդիսանում է սղաճը բնութագրող հիմնական ցուցանիշ): ՍԳԻ-ն բնութագրում է բնակչության անձնական սպառման համար ձեռք բերված ապրանքների և ծառայությունների փաստացի հաստատագրված կազմի արժեքի փոփոխությունը ժամանակի ընթացքում, ինչպես նաև տարածության մեջ: ՀՀ-ում ՍԳԻ-ն հաշվարկվում է տարբեր ժամանակահատվածների՝ նախորդ ամսվա, նախորդ տարվա դեկտեմբերի, նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի (աճողական կարգով), նախորդ տարվա համապատասխան ամսվա և բազիսային տարվա նկատմամբ: ՍԳԻ հաշվարկման համար Երևան քաղաքում և հանրապետության մարզերում (Արարատի մարզում՝ սկսած 2004թ. փետրվարից)

սահմանված մեթոդաբանությամբ կատարվում է սպառողական գների (սակագների) ամենամսյա դիտարկում:

Սահմանված է գների դիտարկման հետևյալ կարգը.

Հետազոտվող բնակավայրերում, յուրաքանչյուր ամիս, կատարվում է սպառողական ապրանքների գների և բնակչությանը մատուցված վճարովի ծառայությունների սակագների դիտարկում:

Յուրաքանչյուր ապրանքատեսակի (ապրանքախմբի) և բնակչությանը մատուցված ծառայության համար ընտրված է ապրանք (ծառայություն)-ներկայացուցիչ (ընդամենը 400 անվանում), նախապես նշելով դրանց տեխնիկական բնութագրերը, չափման միավորը և այլ անհրաժեշտ հատկանիշներ՝ հաշվի առնելով սպառողական շուկայում հազեցվածության ու սպառման աստիճանը, արդիականությունը, ներկայացուցչական լինելը և այլն: Յուրաքանչյուր ապրանքատեսակի կամ ծառայության համար հետազոտվում է 9-12 առևտրի (ծառայության) կետ՝ անկախ սեփականության ձևից: ՍԳԻ-ի հաշվարկման համար յուրաքանչյուր ամիս, յուրաքանչյուր բնակավայրում ամեն մի ապրանքատեսակի համար կատարվում է մինչև 36 գնի դիտարկում:

Գները դիտարկվում են յուրաքանչյուր ամսվա համար 3 անգամ՝ 1-ին, 10-ին և 20-ին մոտակա օրերին և գրանցված գների հիման վրա կատարվում է միջին ամսական գների հաշվարկ՝ ըստ ապրանքատեսակների և ըստ դիտարկվող բնակավայրերի:

Ըստ մարզերի, գների դիտարկումը կատարվում է հետևյալ բնակավայրերում.

Արագածոտն՝	Թալին
Արարատ՝	Արտաշատ
Արմավիր՝	Վաղարշապատ
Գեղարքունիք՝	Մարտունի
Լոռի՝	Վանաձոր
Կոտայք՝	Հրազդան, Չարենցավան
Շիրակ՝	Գյումրի
Սյունիք՝	Կապան
Վայոց Ձոր՝	Եղեգնաձոր
Տավուշ՝	Դիլիջան

Հետազոտության մեջ ընդգրկված մարզերի և Երևան քաղաքի համար կշիռ է վերցվում բնակչության թվաքանակը, ընդհանուր ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված վճարովի ծառայությունների ծավալներում դրանց տեսակարար կշիռները:

Սպառողական զամբյուղի հաշվարկման համար հիմք է ընդունվում ՀՀ ԱՎԾ կողմից հանրապետությունում հետազոտվող տնային տնտեսությունների կողմից սպառման համար կատարված ծախսումների մասին ամենամսյա դիտարկման արդյունքները և հաշվարկվում զամյուղում ներգրավված 400 անվանում ապրանք (ծառայություն)-ներկայացուցիչներից յուրաքանչյուրի տեսակարար կշիռը բազիսային ժամանակաշրջանի համար:

Հայաստանի Հանրապետությունը Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) տվյալների տարածման հատուկ ստանդարտին անդամակցության կապակցությամբ ՀՀ-ում սպառողական գների ինդեքսի հաշվարկման մեթոդաբանությունում կատարվել է փոփոխություն: Որպես բազիսային ժամանակաշրջան ընդունվել է 2002 թվականը: Նախորդ տարիներին յուրաքանչյուր տարվա համար որպես բազիսային ժամանակաշրջան ընդունվում էր նախորդ տարվա դեկտեմբերը և կատարվում էր սպառողական զամբյուղի վերահաշվարկ՝ հիմք ընդունելով տնային տնտեսությունների սպառման համար կատարված ծախսումների վերաբերյալ հետազոտության արդյունքները: 2004թ. հունվարից սկսած սպառողական գների ինդեքսի հաշվարկը կատարվում է 2002 թվականի միջին տարեկանի նկատմամբ և նախորդ ամսվա նկատմամբ: ԱՄՀ-ի վիճակագրության դեպարտամենտի առաջարկով, ինչը նաև վերը նշված ստանդարտի պահանջներից է, գների ինդեքսի հաշվարկման համար հիմք է ընդունվում

անփոփոխ զամբյուղ՝ առնվազն 3-5 տարվա համար, երկարաժամկետ միջակայքում համադրումներ ապահովելու նկատառումներով:

ՍԳԻ-ն հաշվարկվում է Լասպեյրեսի բանաձևով, բազիսային անփոփոխ կշռվածությամբ, այսինքն հաշվվում է մաքուր գնային ինդեքս, ինչը համարվում է սղաճի չափանիշ Հայաստանի Հանրապետությունում:

ՀՀ-ում ՍԳԻ-ը հաշվարկելու համար կիրառվում է Լասպեյրեսի բանաձևի հետևյալ տարբերակը.

$$I_{on} = \frac{\sum \frac{P_{nj}}{P_{n-1,j}} \times P_{n-1,j} Q_{oj}}{\sum P_{oj} Q_{oj}} \times 100$$

որտեղ՝ $P_{n-1,j} Q_{oj} = P_{oj} Q_{oj} \times \frac{P_{1j}}{P_{oj}} \times \frac{P_{2j}}{P_{1j}} \times \dots \times \frac{P_{n-1,j}}{P_{n-2,j}}$

ՀՀ արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս (ԱԱԳ) բնութագրում է արդյունաբերական ոլորտի կազմակերպությունների թողարկած արտադրանքի գների (առանց ավելացրած արժեքի և ակցիզային հարկերի) փոփոխությունը ժամանակի ընթացքում:

Արդյունաբերական արտադրանքի գների փոփոխության դիտարկումն իրականացվում է ընտրանքային կարգով ընտրված արդյունաբերության ոլորտի 254 բազային կազմակերպությունների տվյալների հիման վրա: Գների գրանցումն իրականացվում է մինչև 888 անվանում արտադրանք-ներկայացուցիչների գծով, որտեղ ներգրավված է հիմնական, որակական հատկանիշներով, օգտագործվող հումքով և արտադրության տեխնոլոգիական գործընթացներով իրար մոտ (միանման), առավել ներկայացուցչական արտադրանք:

Հայաստանի Հանրապետությունը Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) տվյալների տարածման հատուկ ստանդարտին անդամակցության կապակցությամբ 2004թ. հունվարից սկսած ՀՀ-ում արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսի հաշվարկը կատարվում է ըստ Լասպեյրեսի բանաձևի՝ 2002 թվականի միջին տարեկանի նկատմամբ, նախորդ ամսվա, նախորդ տարվա դեկտեմբերի, նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի (աճողական կարգով), նախորդ տարվա համապատասխան ամսվա և բազիսային տարվա նկատմամբ:

Գյուղմթերք արտադրողների իրացման գների ինդեքսը արտահայտում է գյուղատնտեսական մթերք արտադրողի տարբեր ուղղություններով իրացված մթերքի գների փոփոխությունները ժամանակի, ինչպես նաև տարածության մեջ: Այն հաշվարկվում է ՀՀ-ում 7600 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից իրացված 61 անվանում գյուղմթերքի գների ագրեգացիոն մեթոդով, ըստ բուսաբուծական և անասնապահական մթերքի և ըստ հանրապետության մարզերի: Դրանցից յուրաքանչյուրն իրենից ներկայացնում է առանձին ապրանքատեսակների ինդեքսների կշռված մեծություն, ընդգրկված միատեսակ ապրանքախմբում: Որպես անհատական ինդեքսների կշռման բազա օգտագործվում է հաշվետու ամսում իրացված արտադրանքի ծավալը:

Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսը բնութագրում է արտադրության միջոցների գնման գների փոփոխությունների շարժը հաշվետու ժամանակահատվածում բազիսայինի համեմատ: Հաշվարկվում է 7600 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից ձեռք բերված 92 անվանում արտադրության միջոցների գնման գների հետազոտման տվյալների հիման վրա:

Բեռնափոխադրումների սակագների ինդեքսը բնութագրում է տրանսպորտի տարբեր տեսակներով բեռնափոխադրումների սակագների փոփոխությունները ժամանակի ընթացքում: Ազդեցացվում է հանրապետությունում գործող 4 տեսակի՝ ավտոմոբիլային, երկաթուղային, օդային, խողովակաշարային բեռնափոխադրումների սակագների հաշվարկված ինդեքսների միջոցով, որը որոշում է տրանսպորտի առանձին տեսակներով բեռնափոխադրումների սակագների շարժն ընթացիկ ժամանակահատվածում բազիսայինի համեմատ՝ առանց հաշվի առնելու տեղափոխվող բեռների կառուցվածքային փոփոխությունների հետ կապված հանգամանքները (բեռի տեսակը, փոխադրման չափը, տեղ հասցնելու արագությունը և այլն): Տրանսպորտի յուրաքանչյուր տեսակի գծով (ավտոմոբիլային, երկաթուղային, օդային, խողովակաշարային) գրանցվում է ծառայություն-ներկայացուցչի բեռնափոխադրման սակագինը, ինչով պայմանավորվում է տրանսպորտի կոնկրետ տեսակով առավել հաճախ փոխադրվող մեկ միավոր բեռի (տոննա, խորանարդ մետր) առաքումը փաստացի տարածության վրա (որոշակի երթուղով): Որպես կշռման բազա ընդունվում են որոշակի բազիսային ժամանակահատվածում (հիմնականում՝ նախորդ տարում) բեռների տեղափոխման ծառայությունների դիմաց տրանսպորտային կազմակերպությունների կողմից ներկայացված եկամուտների մասին տվյալները:

Արտաքին առևտրի գների կամ միավորի արժեքի ինդեքսը բնութագրում է արտաքին առևտրի ապրանքների գների փոփոխման հաշվին արտահանման և ներմուծման արժեքի փոփոխությունը անփոփոխ, հաստատուն ֆիզիկական ծավալի պայմաններում: Արտաքին առևտրի գների ինդեքսի հաշվարկի համար որպես տվյալների սկզբնական աղբյուր հիմք են հանդիսանում ներմուծման, արտահանման բեռնամաքսային հայտարարագրերը: Ստացված տվյալների գաղտնիությունն ապահովելու համար մշակվում է արտաքին առևտրի ներմուծման (արտահանման) գների ինդեքսների հետագա հաշվարկի համար հատուկ տվյալների բազա: Հաշվարկներին մասնակցում են միատարր ապրանքատեսակներ, որոնք՝

- ծածկագրված են ըստ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի (ԱՏԳԱ) դասակարգչի ութանիշ ծածկագրերի,
- դասակարգված են՝
 - ըստ ապրանքային ենթախմբերի,
 - ըստ ապրանքային խմբերի,
 - ըստ ապրանքային բաժնների,
- ունեն ապրանքի քանակի և արժեքի մասին տվյալներ և պարունակում են տեղեկատվություն տվյալ ապրանքն արտահանող կամ ներմուծող երկրի մասին:
 - Արտաքին առևտրի գների ինդեքսների հաշվարկը տարվում է 3 ուղղություններով՝
 - ♦ "Ըստ բոլոր երկրների",
 - ♦ "Ըստ ԱՊՀ երկրների",
 - ♦ "Ըստ ոչ ԱՊՀ երկրների",

Արտաքին առևտրի գների ինդեքսի հաշվարկի համար կիրառվում է Լասպեյրեսի միջին արժեքի ինդեքսի բանաձևը: Դա թույլ է տալիս համադրել ընթացիկ ժամանակաշրջանը բազիսային ժամանակաշրջանի հետ: Միավորի արժեքի գինը կշռվում է բազիսային ժամանակաշրջանի առևտրային հոսքերով, որոնք կարող են տարեց տարի զգալի տատանվել, կորցնել արդիականությունը և նպաստել գների ինդեքսների արհեստական աճին: Ուստի, այնպիսի բնագավառում ինչպիսին արտաքին առևտուրն է, նպատակահարմար է բազիսային ժամանակաշրջանն ընդունել նախորդ տարին:

«Ըստ ԱՊՅ երկրների» և «ըստ ոչ ԱՊՅ երկրների» ուղղություններում ինչպես ընթացիկ եռամսյակի, այնպես էլ բազիսային տարվա համար հաշվարկվում է առանձին ապրանքատեսակների ներմուծման (արտահանման) միջին արժեքը (գինը):

$$\overline{P}_i = \frac{V_i}{Q_i}$$

որտեղ՝

P_i - i-րդ ապրանքատեսակի միջին արժեքն է,

V_i - i-րդ ապրանքատեսակի ծավալն է գումարային արտահայտությամբ,

Q_i - i-րդ ապրանքատեսակի քանակն է:

Օգտագործելով տոկոսային փոփոխությունների փոխկապակցման (ագրեգացիոն) եղանակը, ապրանքատեսակների ինդեքսների հիման վրա հաշվարկվում են ապրանքային ենթախմբերի, խմբերի, բաժինների միջին արժեքների ինդեքսներ, ինչպես նաև ներմուծման և արտահանման գների ամփոփ ինդեքսներ «ըստ ԱՊՅ երկրների» և «ըստ ոչ ԱՊՅ երկրների»:

որտեղ՝

$$I_E = \frac{\sum_{i=1}^n \frac{\overline{P}_{it}}{\overline{P}_{io}} * W_{io}}{\sum_{i=1}^n W_{io}}$$

I_E - յուրաքանչյուր ապրանքային ենթախմբի միջին արժեքի ինդեքսն է,

P_{it} -- i-րդ ապրանքի միջին արժեքն (գինն) է ընթացիկ եռամսյակում,

P_{io} -- i-րդ ապրանքի բազիսային գինն է (միջին արժեքը),

W_{io} - i-րդ ապրանքի տեսակարար կշիռն է բազիսային ժամանակաշրջանում:

Հաշվարկված արտաքին առևտրի միջին արժեքի ինդեքսների շարքը կարող է լինել խիստ անկանոն ի հաշիվ առանձին ապրանքատեսակների գների կտրուկ տատանումների: Նման կարգի գնային մեծ շեղումներից խուսափելու համար օգտագործվում է ինդեքսների շարքի վերին և ստորին թույլատրելի սահմանների հարթեցման մեթոդը՝ սահմանային գործակիցների կիրառմամբ, ինչը հնարավորություն է տալիս ապահովել գնային փոփոխության ճշգրտության անհրաժեշտ մակարդակը՝ բացառելով յուրաքանչյուր տարվա համար անհամադրելի տվյալները և հնարավոր սխալները:

Ինդեքսի թույլատրելի վերին և ստորին սահմանները որոշվում են առանձին ապրանքատեսակների գների միջին քառակուսային շեղումների և դրանց հիման վրա հաշվարկված վարիացիոն գործակիցների օգնությամբ (միջոցով):

Արտաքին առևտրի գների ինդեքսի հաշվարկման մեթոդաբանությունը համապատասխանում է միջազգային ստանդարտներին, հաշվի է առնվել Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից արված առաջարկությունները և համարվում է ԱՄՅ-ի կողմից առաջարկված նախապատվելի տարբերակներից մեկը:

Աշխատանք

Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձի վերաբերյալ ցուցանիշը ստացվել է մոտ 9000 կազմակերպություններից ամսական և եռամսյակային պարբերականությամբ հավաքագրվող հաշվետվությունների տվյալների հիման վրա:

Միջին ամսական անվանական աշխատավարձը հաշվարկվում է որպես աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումների (ներառյալ պարգևավճարները և

փոխհատուցումները) ընդհանուր գումարի (ինչպես դրամական, այնպես էլ բնեղեն տեսքով) հարաբերություն աշխատողների միջին ցուցակային թվաքանակին:

Իրական աշխատավարձը բնութագրում է դիտարկվող ժամանակահատվածում ապրանքների և ծառայությունների այն ծավալը, որը հնարավոր է ձեռք բերել աշխատավարձով, ելնելով բազիսային ժամանակաշրջանի գներից և հաշվարկվում է տվյալ ժամանակաշրջանի անվանական աշխատավարձի հարաբերությամբ նույն ժամանակաշրջանի սպառողական գների ինդեքսին:

Իրական աշխատավարձի ինդեքսը հաշվարկվում է միևնույն ժամանակաշրջանի անվանական աշխատավարձի ինդեքսի և սպառողական գների ինդեքսի հարաբերությամբ:

Աշխատավարձի ժամկետանց պարտքը աշխատողներին փաստացի հաշվարկված, բայց դեռևս չվճարված աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումների (ներառյալ պարգևավճարները և փոխհատուցումները) ընդհանուր գումարն է:

Տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակը զբաղված և պաշտոնապես գրանցված գործազուրկ բնակչության թվաքանակների հանրագումարն է:

Ջրաղվածներ համարվում են ինչպես վարձու աշխատանք կատարողները՝ դրամական կամ բնեղեն վարձատրությամբ (անկախ այն բանից աշխատանքը եղել է մշտական, ժամանակավոր, սեզոնային, պատահական կամ միանգամյա), այնպես էլ ոչ վարձու աշխատանք կատարողները՝ վարձու աշխատողների ներգրավմամբ կամ առանց վարձու աշխատողների, ովքեր ստանում են շահույթ կամ ընտանեկան եկամուտ, տարբեր պատճառներով աշխատանքից ժամանակավորապես բացակայողները, ընտանիքի առանց վարձատրման աշխատող անդամները:

Տնտեսության մեջ զբաղված բնակչության թվաքանակի եռամսյակային գնահատումը կատարվում է ըստ հետևյալ աղբյուրների.

- աշխատողների միջին թվաքանակի վերաբերյալ 9000 կազմակերպությունների ամսական և եռամսյակային պարբերականությամբ հավաքագրվող պետական վիճակագրական հաշվետվությունների և մասնավոր հատվածի փոքր կազմակերպությունների ընտրանքային հետազոտությունից ստացվող տվյալները,

- գյուղացիական տնտեսությունների քանակի վերաբերյալ գյուղատնտեսության վիճակագրության տվյալները,

- անհատ ձեռնարկատերերի վերաբերյալ պետական ռեգիստրի տվյալները,

- թաքնված զբաղվածների վերաբերյալ աշխատուժի ընտրանքային հետազոտությամբ ստացվող տվյալները:

Թաքնված զբաղվածների մեջ ներառվում են գործատուի հետ բանավոր համաձայնությամբ (առանց պայմանագրի, հրամանի կամ օրենսդրությամբ սահմանված կարգով այլ փաստաթղթային ձևակերպման) աշխատող վարձու աշխատողները և այն գործատուներն ու ինքնազբաղվածները, ովքեր իրականացնում են չգրանցված տնտեսական գործունեություն:

Ջրաղվածության պետական ծառայությունում գրանցված գործազուրկները հանրապետության տարածքում մշտապես բնակվող 16 և բարձր տարիքի աշխատունակ և գեթ մեկ տարվա աշխատանքային ստաժ ունեցող այն քաղաքացիներն են, ովքեր դիտարկվող ժամանակաշրջանում չեն ունեցել աշխատանք կամ եկամտաբեր զբաղմունք, աշխատանք են փնտրել «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալության տարածքային կենտրոնների օգնությամբ, պատրաստ են եղել անցնել աշխատանքի՝ օրենսդրությամբ սահմանված ժամանակաշրջանում կամ անմիջապես:

Ըստ Աշխատանքի միջազգային կազմակերպության ստանդարտների գործազուրկ են համարվում անձինք (ըստ ազգային օրենսդրության՝ 16 և բարձր տարիքի), ովքեր հետազոտվող ժամանակաշրջանում.

- չեն ունեցել աշխատանք կամ եկամտաբեր զբաղմունք
- փնտրել են աշխատանք, այսինքն՝ դիմել են զբաղվածության պետական ծառայություն, աշխատանք են փնտրել ծանոթների, բարեկամների, հայտարարությունների միջոցով կամ ցանկացած այլ եղանակով
- պատրաստ են եղել անմիջապես անցնել աշխատանքի:

Գործազրկության (աշխատանք փնտրելու) տևողությունը այն ժամանակահատվածն է, որի ընթացքում քաղաքացին փնտրել է աշխատանք:

Գործազրկության (աշխատանք փնտրելու) միջին տևողությունը հաշվարկվում է որպես կշռված միջին մեծություն գործազուրկների դիտարկվող կազմի համար:

Գործազրկության մակարդակը հաշվարկվում է որպես գործազուրկների թվաքանակի հարաբերություն տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակին:

Աշխատուժի նկատմամբ կազմակերպության կամ գործատուի հայտարարած պահանջարկը թափուր աշխատատեղերի (պահանջվող աշխատողների) թիվն է, որի վերաբերյալ կազմակերպությունը կամ գործատուն հայտնում են զբաղվածության պետական ծառայությանը:

Մեկ թափուր աշխատատեղի ծանրաբեռնվածությունը հաշվարկվում է որպես զբաղվածության պետական ծառայությունում հաշվառված աշխատանքային գործունեությամբ չզբաղված քաղաքացիների թվաքանակի և կազմակերպությունների կամ գործատուների կողմից նույն ծառայությանը հայտնած թափուր աշխատատեղերի թվի հարաբերություն:

Բնակչության դրամական եկամուտներ և ծախսեր

Բնակչության դրամական եկամուտները ներառում են վարձու աշխատողների աշխատավարձը, ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտները, կենսաթոշակները, նպաստները, կրթաթոշակները և այլ սոցիալական տրանսֆերտները, արտարժույթի վաճառքից եկամուտները, սեփականությունից եկամուտները՝ ներդրումների, արժեթղթերի, շահաբաժինների տոկոսների տեսքով և այլ եկամուտներ:

Բնակչության դրամական ծախսերը ներառում են ապրանքների գնման և ծառայությունների վճարման ծախսերը, պարտադիր վճարումները և կամավոր մուծումները (հարկեր և գանձումներ, ապահովագրական վճարներ, հասարակական կազմակերպություններին կատարված մուծումներ, ապառիկ գնված ապրանքների դիմաց վճարված տոկոսներ և այլն), ինչպես նաև խնայողությունների հավելաճը (նվազումը) արժեթղթերում և ավանդներում, տարադրամի գնումը և այլ ծախսերը :

Ֆինանսներ և դրամաշրջանառություն

Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգը բաղկացած է պետական և համայնքների բյուջեներից:

Պետական և համայնքների բյուջեները պետությանը և տեղական ինքնակառավարման մարմիններին ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների ձևավորման և ծախսման որոշակի ժամանակահատվածի ֆինանսական ծրագրերն են:

Բյուջեները կազմվում և կատարվում են ըստ բյուջեների եկամուտների և ծախսերի միասնական դասակարգման:

Բյուջետային դասակարգումն ունի հետևյալ կառուցվածքը.

- ա) բյուջեների եկամուտներ և պաշտոնական տրանսֆերտներ,
- բ) բյուջեների ծախսեր,
- գ) պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներ,

Բյուջեների եկամուտների աղբյուրները դասակարգվում են .

- ա) հարկային եկամուտներ,
- բ) տուրքեր (պետական, տեղական),
- գ) ոչ հարկային եկամուտներ,
- դ) եկամուտներ կապիտալի գործառնություններից,
- ե) մուտքեր պաշտոնական տրանսֆերտներից,

Բյուջեների ծախսերը դասակարգվում են ըստ՝

- պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթների (գործառնական դասակարգում),
- ծախսերի տնտեսագիտական բովանդակության (տնտեսագիտական դասակարգում):

Պետական բյուջեի պակասուրդը ծախսերի գերազանցման մեծությունն է եկամուտների նկատմամբ:

Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման աղբյուրները ներքին և արտաքին աղբյուրներից ներգրավված փոխառու միջոցներն են.

ա) ներքին,

այդ թվում՝

- ՀՀ կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) միջոցներ,
- ՀՀ առևտրային բանկերի միջոցներ,
- պետական արժեթղթեր,
- պետական կազմակերպությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհումից մուտքեր,
- այլ ներքին աղբյուրներ,

բ) արտաքին,

այդ թվում՝

- միջազգային կազմակերպությունների միջոցներ,
- օտարերկրյա պետությունների միջոցներ,
- այլ արտաքին աղբյուրներ:

Փողի բազան ներառում է ՀՀ ԿԲ-ից դուրս կանխիկ դրամը, ՀՀ ԿԲ-ում առևտրային բանկերի պարտադիր պահուստները և ՀՀ ԿԲ-ում ոչ բանկային կազմակերպությունների ավանդները (բացառությամբ կառավարության ավանդների): Փողի բազան հավասար է նաև ՀՀ ԿԲ-ի զուտ արտաքին և զուտ ներքին ակտիվների հանրագումարին:

Փողի զանգվածը ներառում է շրջանառությունում կանխիկ դրամը և ռեզիդենտ տնտեսության (բնակչության, ձեռնարկությունների և հասարակական կազմակերպությունների) դրամով և արտարժույթով բոլոր ավանդները բանկային համակարգում:

Ցպահանջ ավանդները բանկերի պահպանմանը հանձնված և որևէ գործարք իրականացնելիս հանվող միջոցներն են:

Ժամկետային ավանդները բանկերում որոշակի ժամկետով ձևակերպվող ավանդներն են:

Վարկային ներդրումները բանկային համակարգի կողմից տնտեսությանը տրամադրված վարկերի գծով մնացորդներն են: Վարկային ներդրումները բաժանվում են կարճաժամկետ (տրամադրված մեկ տարուց պակաս ժամկետով) և երկարաժամկետ (մեկ տարուց ավել ժամկետով):

Վճարային հաշվեկշիռ

ՀՀ վճարային հաշվեկշիռը վիճակագրական հաշվետվություն է, որում համակարգված տեսքով արտացոլվում են ամփոփ տվյալներ հաշվետու ժամանակաշրջանում (եռամսյակ, տարի) ՀՀ-ի այլ երկրների և միջազգային կազմակերպությունների հետ արտաքին տնտեսական գործառնությունների վերաբերյալ: Տնտեսական բնույթի գործառնությունները, որոնք կատարվում են ՀՀ ռեզիդենտների¹ և ՀՀ ոչ ռեզիդենտների միջև, իրականացվում են ապրանքների և ծառայությունների, եկամուտների հոսքերի, ընթացիկ տրանսֆերտների, ինչպես նաև ֆինանսական պահանջների և պարտավորությունների տեսքով:

ՀՀ վճարային հաշվեկշիռը կազմված է 2 հիմնական հաշիվներից՝ **ընթացիկ հաշիվ և կապիտալի և ֆինանսական հաշիվ**: **Ընթացիկ հաշվում** գրանցվում են ապրանքների, ծառայությունների, եկամուտների և ընթացիկ տրանսֆերտների հետ կատարված գործառնությունները, իսկ **կապիտալի և ֆինանսական հաշվում**՝ ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների շարժը, ինչպես նաև կապիտալ տրանսֆերտները: Ապրանքների գծով համադրելիությունն ապահովելու համար, վճարային հաշվեկշռի ապրանքներ հոդվածի արտահանման և ներմուծման ծավալները բերված են ՖՕԲ գնով(առանց բեռնափոխադրման և ապահովագրական վճարների): Մեթոդաբանական առումով, ընթացիկ հաշվի մնացորդը, բացարձակ մեծությամբ, հակառակ նշանով պետք է հավասար լինի կապիտալի և ֆինանսական հաշվի մնացորդին, սակայն իրականում միշտ առաջանում են տարբերություններ, որը միջազգային պրակտիկայում ընդունված է անվանել սխալների և բացթողումների հոդված:

Ֆինանսական հաշիվը կազմված է 4 հոդվածներից՝ օտարերկրյա ուղղակի, պորտֆելային, այլ ներդրումներից և պահուստային ակտիվներից: Վճարային հաշվեկշռում օտարերկրյա ներդրումները բերված են զուտ հիմքով, այսինքն օտարերկրյա ներդրումների հոսքեր հանած վճարումներ (ուղղակի ներդրումների դեպքում նաև ներֆիրմային շարժ): Վճարային հաշվեկշռում արտացոլված օտարերկրյա ներդրումները ներառում են ինչպես իրական հատվածում կատարված ներդրումները, այնպես էլ բանկային (ներառյալ ՀՀ ԿԲ) և համակարգերով իրականացված ներդրումները :

Օտարերկրյա ներդրում է համարվում գույքի ցանկացած տեսակ (այդ թվում՝ ֆինանսական միջոցներ և մտավոր արժեքներ (ոչ նյութական ակտիվներ)), որն օտարերկրյա ներդրողի կողմից անմիջականորեն ներդրվում է ՀՀ տարածքում իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության ոլորտում՝ շահույթի (եկամտի) ստացման կամ այլ օգտակար արդյունքի հասնելու նպատակով:

Ուղղակի ներդրում կատարվում է արտասահմանյան ուղղակի ներդրողների կողմից, որոնք ձգտում են ձեռք բերել ուղղակի ներդրումով իրավաբանական անձի գուծունեության վրա կայուն, տևական ազդեցություն: Ուղղակի ներդրող (ինվեստոր) է համարվում ոչ ռեզիդենտ միավորը, նրա հետ կապված կամ համագործակցող ոչ ռեզիդենտ կազմակերպությունը (ընկերությունը), որին պատկանում է ՀՀ ռեզիդենտ միավորի

¹ Ըստ Արժույթի միջազգային հիմնադրամի վճարային հաշվեկշռի կազմման մեթոդաբանության, ՀՀ ռեզիդենտ է համարվում ֆիզիկական անձը, տնային տնտեսությունը, ցանկացած իրավաբանական անձ կամ ՀՀ տարածքում գործող որևէ այլ կազմակերպություն, որի մշտական գտնվելու վայրը (ֆիզիկական անձանց համար բնակության վայրը) կամ տնտեսական շահերի կենտրոնը (ֆիզիկական անձանց համար՝ կենսական շահերի կենտրոնը) հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունը:

բաժնետիրական կապիտալի ոչ պակաս, քան 10%-ը: Ուղղակի ներդրումները լինում են **բաժնետիրական կապիտալի, վերաներդրված (ռեինվեստիցիոն) եկամուտների և այլ կապիտալի** տեսքով:

Պորտֆելային ներդրումն օտարերկրյա ներդրողների այն կապիտալ ներդրումն է, որը թույլ է տալիս օտարերկրյա ներդրումով կազմակերպությունում ունենալ սահմանափակ ազդեցություն և ստանալ որոշակի շահույթ, որը կարգավորվում է կողմերի միջև կնքվող պայմանագրով: Պորտֆելային ներդրումները լինում են կապիտալի արժեթղթերի՝ գլխավորապես բաժնետոմսերի (բաժնետիրական ընկերությունների կողմից թողարկվող) և պարտքի արժեթղթերի տեսքով:

Այլ ներդրումը ներդրումների այն մնացած մասն է, որը ներառում է բոլոր տեսակի ֆինանսական գործառնությունները, որոնք չեն ընդգրկվել ուղղակի և պորտֆելային ներդրումներում: Այլ ներդրումները լինում են փոխառությունների, վարկերի՝ դրամական և առևտրային (բացի օտարերկրյա ներդրումով կազմակերպության ստացածն իր անմիջական ներդրող կազմակերպությունից, որն ուղղակի ներդրում է), ավանդների և այլնի տեսքով:

Միջազգային ներդրումային դիրք

ՀՀ միջազգային ներդրումային դիրքը (ՀՀ ՄՆԴ) վիճակագրական հաշվետվություն է, որտեղ արտացոլվում են երկրի ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների պաշարների մակարդակն որևէ ժամանակահատվածի սկզբի և վերջի դրությամբ: Միաժամանակ, հաշվետվության մեջ արտացոլվում են այն բոլոր փոփոխությունները, որոնք կատարվել են ուսումնասիրվող ժամանակահատվածում ֆինանսական գործառնությունների, գների, փոխարժեքի և այլ փոփոխությունների շնորհիվ:

ՀՀ ՄՆԴ-ն սերտորեն կապված է ՀՀ վճարային հաշվեկշռի հետ: ՀՀ վճարային հաշվեկշռի ֆինանսական հաշվում գրանցվում են բոլոր գործառնությունները, որոնք կապված են արտաքին ակտիվների և պարտավորությունների հետ: Բնականաբար, այդ գործառնություններն իրենց ազդեցությունն են ունենում ՀՀ ՄՆԴ-ում արտացոլված արտաքին ակտիվների ու պարտավորությունների պաշարների վրա: Միաժամանակ, կան նաև այլ գործոններ (գների, փոխարժեքի փոփոխություններ), որոնք ժամանակի ընթացքում հանգեցնում են ակտիվների և պարտավորությունների արժեքի փոփոխության: Այդ փոփոխությունները նույնպես արտացոլվում են ՀՀ ՄՆԴ-ում:

ՀՀ ՄՆԴ-ն արտացոլում է տնտեսության արտաքին ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների պաշարները, իսկ ՀՀ վճարային հաշվեկշռի ֆինանսական հաշիվը՝ այդ ակտիվների ու պարտավորությունների հետ կատարված գործառնությունները (հոսքերը կոնկրետ ժամանակահատվածում):

Արտաքին առևտուր

Արտաքին առևտրի վերաբերյալ (արտաքին առևտրի շրջանառություն, արտահանում, ներմուծում, առևտրային հաշվեկշիռ) ցուցանիշների հաշվարկման համար հիմք են հանդիսացել բեռնամաքսային հայտարարագրերի, ֆիզիկական անձանց կողմից կատարված առևտրի տվյալները՝ ստացված ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեից և բնական զագի ներմուծման և էլեկտրաէներգիայի արտահանման և ներմուծման տվյալները՝ ստացված ՀՀ էներգետիկայի նախարարությունից:

Արտահանում: Ապրանքների արտահանումն է այլ երկրներ՝ ազատ շրջանառության կամ ակտիվ վերամշակման համար: Արտահանման ծավալում ընդգրկված են ինչպես հայրենական արտադրության, այնպես էլ վերաարտահանված արտասահմանյան արտադրության

ապրանքները: Արտահանված ապրանքների արժեքները հաշվարկված են ՖՕԲ գնով՝ ապրանքի արժեքը մինչև ՀՀ սահման:

Ներմուծում: Ապրանքների ներմուծումն է այլ երկրներից՝ հանրապետության ներսում ազատ շրջանառության, ակտիվ վերամշակման կամ մաքսային հսկողության ներքո վերամշակման համար: Ներմուծման ծավալում ընդգրկված են արտասահմանյան ապրանքները, որոնք ներմուծվել են հանրապետություն սպառման և վերաարտահանման համար: Ներմուծված ապրանքների արժեքները հաշվարկված են ՍԻՖ գնով՝ ապրանքի արժեքը մինչև ՀՀ սահման, ներառյալ ապահովագրության և տրանսպորտային փոխադրության ծախսերը:

Արտաքին առևտրի շրջանառություն: Արտահանման և ներմուծման ծավալների հանրագումարն է:

Արտաքին առևտրի հաշվեկշիռ: Արտահանման (ՖՕԲ) և ներմուծման (ՍԻՖ) ծավալների տարբերությունն է:

Կիրառվող համակարգը: Արտաքին առևտրի վիճակագրության վարման համար կիրառվում է արտաքին առևտրի ընդհանուր համակարգ, երբ երկրի վիճակագրական տարածքը հանընկնում է տնտեսական տարածքին:

Գործընկեր երկիրը: Գործընկեր երկրի բնորոշման համար արտահանման ժամանակ կիրառվում է ապրանքը վերջնական նշանակման երկիր առաքելու, իսկ ներմուծման ժամանակ՝ ապրանքն առաքող երկրի հատկանիշը:

Արտաքին պարտք

Համախառն արտաքին պարտքը ժամանակաշրջանի ցանկացած պահին փաստացի ընթացիկ և ոչնչով չպայմանավորված պարտավորությունների չվճարված գումարն է, որը պահանջում է հիմնական պարտքի և (կամ) տոկոսների վճարումներ հետագայում ժամանակի որևէ պահին և իրենից ներկայացնում է ռեզիդենտների պարտավորությունները ոչ ռեզիդենտների նկատմամբ:

Արտաքին պարտքը որպես կանոն առաջանում է պայմանագրային հարաբերությունների հիման վրա, ըստ որի մեկ կառուցվածքային միավորը /դեբիտորը / պարտավորություններ է ստանձնում մեկ այլ կառուցվածքային միավորի /կրեդիտորի/ հանդեպ վերադարձնել հիմնական գումարը տոկոսներով կամ առանց տոկոսների կամ էլ վճարել տոկոսները առանց վերադարձնելու հիմնական գումարը:

Պարտքի գործիքները: արտաքին պարտքի գործիքների թվին են դասվում պարտքի արժեթղթերը, վարկերը, առևտրային վարկը, կանխիկ դրամական միջոցները և ավանդները, ինչպես նաև օտարերկրյա ուղղակի ներդրումների տարր հանդիսացող միջֆիրմային շարժը (վարկեր, առևտրային վարկեր, փոխառություններ):

Պարտքի գործիքներ չեն համարվում ֆինանսական գործիքների ֆինանսական ածանցյալները, կապիտալի մասնակցության արժեթղթերը, ինչպես նաև օտարերկրյա ուղղակի ներդրումների տարր հանդիսացող բաժնետիրական կապիտալը և վերաներդրված շահույթը (եկամուտը):

Արտաքին պարտքը հաշվարկվում է ըստ տնտեսության հատվածների, որոնք համաձայն արտաքին պարտքի մեթոդաբանության դասակարգվում են (1) պետական կառավարման մարմիններ, (2) դրամավարկային կարգավորման մարմիններ, (3) առևտրային բանկեր և (4) այլ հատվածներ: Ընդ որում, ՀՀ կառավարության և ՀՀ կենտրոնական բանկի երաշխիքներով մասնավոր հատվածի կազմակերպությունների ստացված վարկերը ըստ արտաքին պարտքի մեթոդաբանության ներառված են տնտեսության “այլ հատվածի” պարտքի ցուցանիշում:

Արտաքին պարտքի ցուցանիշը ներառում է ոչ միայն հիմնական գումարը, այլ նաև ժամանակահատվածի վերջի դրությամբ հաշվարկված, բայց դեռևս չվճարված տոկոսավճարները:

Ժողովրդագրություն

Մշտական բնակչությունը մշտապես ապրող բնակչությունն է, ներառյալ ժամանակավոր (մինչև 1 տարի ժամկետով) բացակայողները:

Բնակչության բնական շարժը ծնվածների և մահացածների համակցության ընդհանրացված անվանումն է, այսինքն՝ բնական ճանապարհով բնակչության թվաքանակի փոփոխումը: Բնակչության բնական շարժին վերագրվում են նաև անուսնություններն ու ամուսնալուծությունները, որոնք բնակչության թվաքանակի ցուցանիշի վրա ազդեցություն չունեն, սակայն հաշվարկվում են նույն եղանակով:

Ծնունդների, մահերի, ամուսնության, ամուսնալուծության վերաբերյալ ամենամսյա տեղեկությունները ստացվում են ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների կողմից կազմված ծննդյան, մահվան, ամուսնության, ամուսնալուծության ակտերում գրանցված տեղեկությունների հիման վրա: Ծնվածների թվաքանակի մեջ ներառված են միայն կենդանի ծնված երեխաները:

Մահվան պատճառների մասին տեղեկատվության աղբյուր է հանդիսանում մահվան մասին բժշկի կողմից կազմված մահվան բժշկական վկայագրերում՝ դժբախտ պատահարի, սպանության, ինքնասպանության և այլ արտաքին գործողությունների վերաբերյալ գրանցումները, որոնք մահվան պատճառ են հանդիսացել: Նշված փաստաթղթերը՝ մահվան վերաբերյալ ակտի հետ միասին, վիճակագրական մշակման համար ուղարկվում են վիճակագրական մարմիններին:

Մահվան ակտերի մշակումն ըստ մահվան պատճառների, կատարվում է Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության կողմից ընդունված IX վերանայման դասակարգչով:

Ծնելիության և մահացության ընդհանուր գործակիցները ծնվածների (կենդանի) և մահացածների թվաքանակի և մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշների հարաբերությունն են: Հաշվարկվում են 1000 բնակչի հաշվով:

Բնական աճի գործակիցը ծնելիության և մահացության գործակիցների տարբերությունն է:

Ամուսնության և ամուսնալուծության ընդհանուր գործակիցները գրանցված ամուսնությունների և ամուսնալուծությունների քանակի և մշտական բնակչության ընդհանուր թվաքանակի ցուցանիշների հարաբերությունն է: Հաշվարկվում է 1000 բնակչի հաշվով: Բոլոր գործակիցները հաշվարկվում են, համապատասխանեցնելով տարվա հաշվարկին:

Մանկամահացության գործակիցը, եռամսյակային կտրվածքով, մինչև 1 տարեկան հասակում մահացածների թվաքանակի հարաբերությունն է նույն ժամանակահատվածում կենդանի ծնվածների թվաքանակին: Տարեկան կտրվածքով (տվյալների մեքենայական մշակման արդյունքով) այն հաշվարկվում է որպես 2 բաղադրիչների գումար: Դրանցից առաջինն այդ տարում ծնվածների սերնդից (որի համար հաշվարկվում է գործակիցը) մինչև մեկ տարեկան հասակում մահացածների թվաքանակի հարաբերակցությունն է նույն տարում ծնվածների ընդհանուր թվաքանակին, իսկ երկրորդը՝ նախորդ տարում ծնվածների սերնդից մինչև մեկ տարեկան հասակում մահացածների թվաքանակի հարաբերությունն է նախորդ տարում ծնվածների ընդհանուր թվաքանակին: Հաշվարկվում է 1000 կենդանածինների հաշվով:

Երեխաների մահացության գործակիցը (մինչև 5 տարեկան) հաշվետու ժամանակաշրջանում մինչև 5 տարեկան հասակում մահացած երեխաների թվաքանակի

ցուցանիշի հարաբերությունն է կենդանի ծնվածների թվաքանակի ցուցանիշին: Հաշվարկվում է 1000 կենդանածինների հաշվով:

Մայրամահացության գործակիցը հղիության հետ կապված բարդություններից, ծննդյան և ետծննդյան ժամանակահատվածում տվյալ տարվա մահացածների թվաքանակի ցուցանիշի հարաբերությունն է կենդանի ծնվածների թվաքանակի ցուցանիշին: Հաշվարկվում է 100 000 կենդանածինների հաշվով:

Առողջապահություն

Վարակիչ և տարափոխիկ հիվանդություններ: Այլ սալմոնելոզային ինֆեկցիաներ՝ ներառում է տոկսիկոինֆեկցիոն հիվանդությունները՝ հարուցված տարբեր սերոտիպի սալմոնելոզներով (սալմոնելոզային գաստրոէնտերիտ և սալմոնելոզի գեներալիզացված ձևերը):

Էնտերիտներ, կոլիտներ, գաստրոէնտերիտներ, սննդային տոկսիկոինֆեկցիաներ՝ հարուցված հաստատված հարուցիչներով՝ ներառում է հաստատված բակտերիալ հարուցիչներով էնտերիտները, կոլիտները, գաստրոէնտերիտները, ադենովիրուսներով և էնտերովիրուսներով հարուցված էնտերիտները, ինչպես նաև այլ վիրուսային էնտերիտները:

Շճադրական: Մարդու ինունային անբավարարության վարակի նկատմամբ ինունոֆերմենտային անալիզի միջոցով կատարված հետազոտությունների երկուսը եղել են դրական :

Իրավախախտումներ

Հանցագործություններ: Ծանր հանցագործություններ համարվում են՝ հանրորեն առավել վտանգավորություն ներկայացնող դիտավորյալ արարքները:

Հանցագործությունը համարվում է դիտավորյալ կատարված, եթե այն կատարող անձը գիտակցել է իր գործողության կամ անգործության՝ հանրության համար վտանգավոր բնույթը, նախատեսել է հանրության համար դրա վտանգավոր հետևանքները և ցանկացել է դրանք կամ գիտակցաբար թույլ է տվել այդ հետևանքների առաջացումը:

Տնտեսական հանցագործություններ են՝ երկրի տնտեսության ոլորտում կատարվող հանրորեն վտանգավոր արարքները, որոնք նախատեսված են օրենքով:

Հարկային հանցագործություններ: Հարկային հանցագործությունները՝ տնտեսական բնույթի հանցագործություններ են, որոնք որակավորվում են ՀՀ քրեական օրենսգրքի հետևյալ հոդվածներով՝ 188, 189, 190, 192, 193, 194, 203, 205, 206, 207, 208, 209, 210, 211, 316, 345:

Մաքսային հանցագործություններ: Խոշոր չափի մաքսանենգություն համարվում է 4000 ամերիկյան դոլարից բարձր գումար ներկայացնող մաքսանենգությունը:

Դատական ակտերի հարկադիր կատարում: Դատական ակտ՝ առաջին ատյանի վերաքննիչ դատարանի և վճռաբեկ դատարանի կողմից կայացրած դատարանի որոշումներն են, դատարանի վճիռներն են և դատավճիռներն են:

Հարկադիր կատարում «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կատարողական գործողություններն են:

Փաստացի բռնագանձված գումար դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթով նախատեսված բռնագանձման ենթակա գումարից փաստացի կատարված բռնագանձում:

Կատարողական վարույթով պետտուրքի բռնագանձում դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթով նախատեսված ՀՀ օրենսդրությամբ սահմանված տուրք, որն ենթակա է պարտադիր բռնագանձման:

Հաշմանդամություն

Հաշմանդամությունը՝ օրգանիզմի ֆունկցիաների կայուն խանգարումների հետևանքով առաջացած սոցիալական անբավարարություն է, որը հանգեցնում է անձի կենսագործունեության սահմանափակման և սոցիալական պաշտպանության անհրաժեշտության:

Ստանդարտացում

Ստանդարտացում՝ իրականում գոյություն ունեցող կամ հնարավոր խնդիրների վերաբերյալ համընդհանուր և բազմակի կիրառման համար դրույթների սահմանման միջոցով որոշակի բնագավառում կարգավորվածության լավագույն աստիճանին հասնելու ուղղված գործունեություն:

Սերտիֆիկացում՝ համապատասխանության հավաստման ընթացակարգ, որի արդյունքով սերտիֆիկացման մարմինը գրավոր հավաստիացնում է արտադրանքի կամ ծառայության համապատասխանությունը նորմատիվ պահանջներին:

Հավատարմագրում՝ ընթացակարգ, որի միջոցով հավատարմագրման խորհուրդը պաշտոնապես ճանաչում է իրավաբանական անձի իրավասությունը՝ համապատասխանության հավաստման որոշակի ոլորտում աշխատանքներ կատարելու համար, ինչպես նաև պաշտոնապես ճանաչում է արտադրանք արտադրողից (վաճառողից) կամ ծառայություն մատուցողից այդ իրավաբանական անձի անկախությունը:

Սերտիֆիկացման մարմին՝ որոշակի արտադրանքի կամ ծառայության համապատասխանության հավաստման աշխատանքների կատարման համար հավատարմագրված իրավաբանական անձ:

Փորձարկման լաբորատորիա՝ որոշակի փորձարկումներ իրականացնելու համար հավատարմագրված իրավաբանական անձ:

Բնապահպանություն

Բնապահպանական վճար - բնապահպանական միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման նպատակով պետական բյուջե վճարվող պարտադիր վճարն է:

Բնօգտագործման վճար – պետական սեփականություն համարվող բնական պաշարների արդյունավետ, համալիր օգտագործման, ինչպես նաև տարբեր որակի բնական պաշարներ օգտագործողների համար տնտեսավարման հավասար պայմաններ ստեղծելու նպատակով այդ պաշարների օգտագործման դիմաց պետական բյուջե վճարվող վճարն է:

Գիտատեխնիկական աշխատանքներ

Գիտատեխնիկական աշխատանքներ են գիտական հետազոտությունները և մշակումները, նախագծակրոնստրուկտորական, տեխնոլոգիական, շինարարության համար նախագծային աշխատանքները, արտադրանքի փորձանմուշների պատրաստումը և գիտատեխնիկական ծառայությունները:

Գիտական հետազոտություն և մշակում համարվում է գիտական գործունեությունը, որը պարբերաբար իրականացվում է գիտելիքների հարստացման և նրանց փորձնական կիրառության նոր ոլորտների որոնման նպատակով:

Գիտական հետազոտության և դրան հարակից գործունեության տարբերակիչ հիմնական հատկանիշը համարվում է աշխատանքում նորույթի առկայությունը:

Մշակումներ համարվում են պարբերական աշխատանքները, որոնք հիմնված են հետազոտությունների, փորձի միջոցով ստացված գոյություն ունեցող գիտելիքների վրա և ուղղված են նոր նյութերի, արտադրանքի, պրոցեսների, հարմարանքների, ծառայությունների, համակարգի կամ մեթոդի ստեղծմանը:

Արխիվային գործ

Կառավարչական փաստաթուղթը՝ կազմակերպությունների կառավարման գործունեության իրականացման, կառավարման և այլ գործառույթների կատարման համար անհրաժեշտ փաստաթղթերի ամբողջություն է:

Անձնական ծագման փաստաթուղթը՝ որևէ անձի, ընտանիքի կամ տոհմի փաստաթղթային ֆոնդի մի մասն է, իսկ մի շարք դեպքերում՝ փաստաթղթային ֆոնդ, որն ընդունված է պետական պահպանության:

Գիտատեխնիկական փաստաթուղթը՝ գիտական հետազոտությունների և տեխնիկական մշակումների ընթացքն ու արդյունքները, ինչպես նաև դրանց արտադրության մեջ ներդրման ուղղություններն ու մեթոդներն արձանագրող գիտական և տեխնիկական փաստաթղթերի ամբողջությունն է:

Արխիվային գործունեության մեջ ընդունված **պահպանման միավորը** փաստաթղթերի քանակի հաշվի այն միավորն է, որն իրենից ներկայացնում է փաստաթղթերի ամբողջություն կամ առանձին վերցված փաստաթուղթ, որն ունի ինքնուրույն նշանակություն:

Գործը՝ մեկ հարցի կամ գործունեության ոլորտի վերաբերող փաստաթղթերի ամբողջություն է կամ մեկ փաստաթուղթ՝ զետեղված առանձին շապիկի մեջ:

Գործերի անվանակարգն իրենից ներկայացնում է հաշվառման փաստաթուղթ, որում նշվում է գործերի վերնագրերն իրենց պահպանության ժամկետներով: